# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 19

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով

ավագանին որոշեց `

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը` համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՂՈՒՆԻԿ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ

ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*ՀԱՎԵԼՎԱԾ*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ*
*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ*
*ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 19 ՈՐՈՇՄԱՆ*

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին: /Զեկ.՝ Մ. Պետրոսյան/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 18-ի 48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
/Զեկ.՝ Մ. Պետրոսյան/

Ավագանու անդամներ՝

Տիգրան Սարգսյան

Սարգիս Գուլինյան

Աղունիկ Ղազարյան

Արտակ Հերիքյան

Ավագ Միքայելյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 20-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով , և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 08.10.2020թ. թիվ 06/27.1/22845-2020 գրությամբ պետական փոձագիտական եզրակացությունը.

Ավագանին որոշեց՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 48-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1/Վարչական բյուջե՝

ա.01բաժին 1խումբ 1 դաս 4111 հոդվածից պակասեցնել 1500.0 հազ.դրամ , ավելացնել 06բաժին 3խումբ 1դաս 4241 հոդվածին 660.0 հազ.դրամ , 01բաժին 6խումբ 1դաս 4241 հոդվածին 340.0 հազ. դրամ, 4823 հոդվածին 500.0հազ. դրամ

2/ Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 11 բաժին 2 խումբ 1 դաս 4891 հոդվածից ֆոնդային բյուջե կատարել հատկացում 2300.0 հազ. դրամ, որից

ա)06 բաժին 3 խումբ 1 դաս 5133 հոդվածին ավելացնել 1000.0 հազ. դրամ,

բ)06 բաժին 3 խումբ 1 դաս 5113 հոդվածին ավելացնել 200.0 հազ. դրամ

գ)06 բաժին 3 խումբ 1 դաս 5134 հոդվածին ավելացնել 300.0 հազ. դրամ,

դ)01 բաժին 1 խումբ 1 դաս 5112 հոդվածին ավելացնել 800.0 հազ. դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԵՐԻՔՅԱՆ ԱՐՏԱԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՂՈՒՆԻԿ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԱԳ

ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 48-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**

1.Նախագծում «18-Ն» թիվն անհրաժեշտ է հանել:

2. Նկատի ունենալով նախագծի նորմատիվ բնույթը՝ անհրաժեշտ է նախագծի վերնագրից առաջ նշել «Ն» տառը՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների:

3. Նախագծի վերնագրից առաջ անհրաժեշտ է նշել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով սահմանված վավերապայմանները, այն է ՝

*«Նորմատիվ իրավական ակտի վավերապայմաններն են՝*

*1) ընդունող մարմնի կամ պաշտոնատար անձի անվանումը.*

*2) ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը.*

*3) հերթական (գրանցման) համարը և նշում դրա բնույթի մասին.*

*4) տեսակի անվանումը»:*

4. Նախագծի վերնագրից հետո նշված «Ձևկ. ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ» բառերն անհրաժեշտ է հանել:

5. Նախագծի վերնագրում «փոփոխություն» բառն անհրաժեշտ է փոխարինել «փոփոխություններ» բառով՝ վերջինս համապատասխանեցնելով նախագծի 1-ին կետին: Սույն դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներից:

6. Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում պարբերություններն անհրաժեշտ է համարակալել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները:

7. Միաժամանակ հայտնում ենք, որ, եթե ներկայացված նախագծով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյալ նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած՝ արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ համայնքի բյուջեում, եթե տվյալ փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող նախագծի հավելվածների տեսքով:

8. Հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:*

Վերոգրյալ կարգավորումների համադրված և բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ պարտադիր պետք է շարադրվեն կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը, կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:

9. Նախագծի 2-րդ կետում «հրապարակման օրվան հաջորդող օրը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով:

Սույն դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝**

Восстановимая подпись

X

Emil Margaryan

Подписано: MARGARYAN EMIL 4014910245

**Է.ՄԱՐԳԱՐՅԱՆ**